

ՄԵԼԵԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ Է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ Է Լ Է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Գրիգոր եւ Սերգէյ Մեղիկեանները իրանց ընտանիքով, Մարիամ Գրիգորեան, Օլգա
Խերխուշիձէ եւ Նինա Մզաւրէտիկեանցը ցաւօք արտի յայտնում են իրանց եղբոր

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԵՂՎԻՆԵԱՆՑԻ

անսպասելի մահը եւ խնդրում են ազգականներին ու ծանօթներին չորս րեբել
Նիկոլայեւիկայա փողոց, տուն Սերգէյ Մեղիկեանցի № 140: Ամբողջը կատարվելու է
շաբաթ օր, երեկոյեան ժամի 7-ին. յուղարկւորութիւնը կ'իրակի, ամսին 29-ին,
առաւօտեան ժամը 10-ին նոյն տնից դէպի Կուկիայի Թանգոյեանց ա. Աստուածածին
եկեղեցին. Թաղումը խօշկանքի գերեզմանատանը:

2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսութիւն. Լաւ ճանաչեցէք.
Մատենագրութիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ՔԻՆ Տեսութիւն. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ-
ԼՈՒՐԵՐ. Մանրակար. Հին-Արտիստ. —ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պէպօ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լ Ա Ի Ճ Ա Ն Ա Ջ Ե Ց Է Ք

Իսկական բարեգործ անձերի այնքան սով է
հայերի մէջ, որ մեր գաւառական թղթակից-
ներէն ոմանք, խաբքով մի քանի ճարպիկ
մարդկանց աշխատակցութիւնից եւ նրանց չը-
պրտած մի քանի սեւ գրօններից, լրագրական
ասպարէզ են դուրս գալիս եւ սուղ էջերը
զբաղեցնում են դրուատներ ներքողում ու
բարեգործ անունը դրոշմելու այնպիսի տըխ-
րահալի հերոսների ճակատին, որոնք, ոչ մի
մարդակալի յատկութիւն չունենալով հան-
դերձ, ամբողջ հասարակութեան համար պա-
տուհան են եղել: Եւ ոչ միայն այնքան պաշ-
տած կուտեցրէր, որպիսի բարեգործութիւննե-
րով են յայտնի.—հան դրանց արածներից ցան-
կը՝ հանգուցեալ յայտնի էր իր բարեգործու-
թեամբը. «մարդ չը կար, որին օգնած չը լի-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

«Պ Է Պ Օ»

(Մեծամեակի առիթով)

I

Մեր թատերագրութիւնն էլ կղերականների
ձեռքով է սկսվել:
1845 թ. Լաւրանին Վենետիկում լոյս տեսաւ
«Պոքոլով Մեծն», ողբերգութիւն հինգ արա-
րուածով, հեղինակութիւն Հ. Պետրոս վ. Մի-
նասեանի: Դա մի շատ հետաքրքրական գիրք
է: Հետաքրքրական ոչ թէ այն պատճառով, որ
այդպէս դուրս են բերված Տրդատի հայր Սոս-
րովը, Գրիգոր Լուսաւորչի հայր Անակը, ինքը,
Գրիգորը («Ջարհե» անունով): Ո՛չ: Գրիգոր հե-
տաքրքրական է իբրեւ ժամանակի երեւոյթ,
հետաքրքրական իր առաջադրանքով:
Այն ժամանակի հայկական լուսաւորութեան
կենտրոնը, գոնէ ազգի ահագին մեծամասնու-
թեան համար, դեռ Վենետիկն էր. Միսիթա-
րեան վանքը դեռ եւս վայելում էր հայ ազգի
միակ ամենահեղինակաւոր ուսուցչի եւ մտա-
ւոր ղեկավարի մենաշնորհը: Աշխարհական գրա-
կանութիւնը դեռ նոր էր ծնւել հանում:
Կարբերական մամուլը դեռ նոր էր սկսել կեն-
դանութեան նշաններ ցոյց տալ:
Լաւ հասկանալով իրանց դերի նշանակու-
թիւնը, օգուտները, Միսիթարեան հայրերը
հասկացան եւ այն, որ ժամանակը առաջ է
գնում, որ հայ ժողովուրդը, չփնջելով եւրօպա-
կան կեանքի հետ, նոր հայեացքների, նոր պա-
հանջների տէր է դառնում: Չը գնալ այդ հո-
ռանքի առջեւից նշանակում էր բոլորովին յետ
մնալ, կորչել: Եւ գիտական վարդապետները
վճռում են չը կորչել. նրանք տանում են մեզ
մի ճանապարհով, որ առաջադիմութիւն է,

նէր նա». «մեծ տօն չէր լինում, որ հանգու-
ցեալը քաղաքիս աղքատների կերակուր, ա-
լիւր, փայտ կամ փող չը բաժանէր» եւ ուրիշ
սրանց նման անմիտ ու ընդհանուր խօսքեր:
Պէտք է գիտենալ, որքան զգուշի տպաւո-
րութիւն են թողնում այդ էժանագին գովեստ-
ները, երբ ճանաչում են, գիտեն, որ բարե-
գործ անունն առի նկարագրվող աղաները
կամ ոսկու պարկերը մի մի դարչելի անձա-
ւորութիւններ են, մի մի անիրաւ աղուկներ,
որոնք կպել են հասարակութեան շինքին եւ
անխնայ ծծում են նրա կենսական հեղուկը:
Նրանք մի-մի մարդասպաններ, աւազակներ են,
որոնք ծանկնդ ցատկանով դէմքի ու փայ-
լուն հանդերձներով տակ, թունաւորել են շա-
տերի կեանքը, յափշտակել են ուրիշների ա-
ղաւ վատտակը, քանդել են տանեակ տներ,
սուգ ու արտասուքի մէջ խեղդել են բազմա-
թիւ ընտանիքներ, աճուրդ, մուրճի տակ են
զրկել իրանց պարտապանի վերջին հագուստը,
սպիտակեղէնը: Դեռ այդ բաւական չէ. նրանք
իրանց մատնութիւններով եւ ամենատար-
իմարիւններով ձգտել են խանգարել ամեն մի
բարի գործ, ամեն մի հասարակական օգտա-
կար ձեռնարկութիւն. աշխատել են անուար-
կել, քաղաքից քաղաք հալածել հասարակական
աշխատաւոր մշակներին: Եւ յանկարծ այդպի-
սի տխրահալի անձերին լրագրական էջերում
ներկայացնում են որպէս հասարակական բա-

բայց այնպիսի առաջադիմութիւն, որ կղերա-
կան հասկացողութիւններին հակառակ չէ:
Չգաղտնի է հայկական թատրոնի անհրաժեշ-
տութիւնը. տեսնում են Վենետիկի վարդա-
պետները, որ հայերը շատ են սիրում թատրո-
նը, աշխատում են իրանց մէջ էլ այդ հիմնա-
կութեան սկիզբը դնել: Եւ վարդապետները
չտապում են բաւարարութիւն տալ այդ պա-
հանջին: Այսպէս է բացատրում Հ. Մինասեան
այն պատճառները, որոնք հարկադրեցին գրել
եւ հրատարակել «Պոքոլով Մեծն»:

Այդ ձեռնարկութեան մէջ Միսիթարեան
վարդապետներին ղեկավարող մանկավարժա-
կան մի մեծ հոգատարութիւնն էր: Նրանք
չէին կամենում, որ թատրոնը մեզ փչացնէ,
ուստի իրանք էին ձեռնամուխ լինում այդ
գործին: Ահա ինչպէս:

Հ. Մինասեան ասում է, թէ կայ երկու
տեսակ թատրոն. կրթական եւ աշխարհական:
Առաջինը բարիք է, երկրորդը՝ չարիք: Կրթա-
կան են այն թատրոնները, ներկայացումները,
որոնք տրվում են Եւրօպայի վարդապետնե-
րում աշակերտների համար, բայց որոնք հա-
ւասարապէս սիրելի են բոլոր բարեպաշտ եւ
բարենպաստ մարդկանց: Կրթական թատ-
րոնը պահպանում է սուրբ միտքը վատ կրքե-
րից, սովորեցնում է աստուածապաշտութիւն,
ազգայնութիւն եւ այլ այսպիսի առաքելու-
թիւններ: Իսկ աշխարհական թատրոնը անբա-
րոյականացնում է նախ եւ առաջ այն պատ-
ճառով, որ այնտեղ բնւ են դուրս գալիս կա-
նայք, այնտեղ հանդէս է բերվում սիրահարու-
թիւնը: Վե՛հ, անհաւան արքայ մարմին հրապա-
րակով խօսել նոյնն է թէ մէկը արքայադստերի
առաջ գինի խմէ, որպէս զի գինեմոլները
ժուժկալութիւն սովորեցնում: Ահա թէ որպիսի
անհղ չարիք է եղել աշխարհական թատրոնը:
Երանի որ մենք դեռ գործի սկզբումն ենք,—
բացականչում է կանանցից եւ սիրահարու-
թիւնից սարսափահար դարձած վարդապետը—

րեգործներ», եւ այն էլ ինչպէս.—որովհետեւ տա-
րին մի-երկու անգամ լալիւր, կերակուր եւ
փայտ են բաժանել աղքատներին», որով փակել
են միմիտ թղթակիցների աչքերը եւ կամե-
ցել են մոռացնել տալ իրանց արիւնք ու
զաղիւր գործերը: Ո՛հ, որպիսի մեծահոգութիւն
են մարդասիրութիւն հազարներ կանել, մեր-
ձաւորի չափիլը հանել՝ եւ յետոյ մի 10—20
րուբլու լալիւր, փայտ՝ բաժանել: Մի րօպէ
համեմատեցէ՛ք բաժանված նպարեղները եւ
չնչին կօպէկները եւ այն ժամանակ ձեր աչ-
քերը կը տեսնեն, թէ ձեր նկարագրած «բա-
րեգործներ» յափշտակած հազարներ են եւ ա-
ւարտութիւններն իր տոկոսն են կազմում այդ
ողորմելի փշրանքները,—իսկապէս այն մասը,
որ այդ ցեղերի զեղանից ամենայն օր չնքի ա-
նալէն անհոգութիւնը բարեգործութիւնը
նման է անկողատի մէջ նկարագրված այն ա-
պաշխարող մարդու բարեգործութեան, որ
խոտովանելիս քահանային ասաց. «Տէր հայր,
մի մեղք եմ գործել եւ չորս վարձք» ու
վարձք այն էր, որ մի եղն էր գողացել, չորս
ոտքը աղքատներին բաժանել: Ահա ձեր բա-
րեգործների կենդանագիրքը:

Եթէ ճիշդ չեն ասածներս, փաստերով ապա-
ցուցէ՛ք: Յոյց տուէ՛ք, ինչպէս, ձեր հանգու-
ցեալ «բարեգործը» իր որբերին է խնամք ցոյց
տուել, իր երկրաշարժից վնասվածներին կամ
սովորականներին է պատկանելի գումարներ
գումարել եւ կամ իր ուսումնասիրած պա-
տանուն օժանդակել իր հասարակական ան-
հրաժեշտ կարիքներին ինչպէս եւ արժանով է
օգնել եւ վերջապէս իր բարեգործութիւններով
իր աստիճան նպաստել է ազգայնակութեան
բարոյական, մտաւոր ու անտեսական զար-
գացման հիմնարկելով նրա համար ուսումնա-
րաններ, արհեստանոցներ, գանաղան տեսակ
աշխատութեան տներ եւ այլն: Գիտե՛ք, եթէ
այդքան հեշտ լինէր մի պուշ ալիւրով, մի
բաժին կերակրով կամ մի մանէթ—տաս շալի
աղքատներին բաժանելով բարեգործի անուն
վատակել, այն ժամանակ ձեզ նման թղթա-

անշուշտ պարտաւոր ենք եւ մեզ համար շատ
հեշտ է, կռելով չարիքն ու օգուտները, չը
մոցնել մեր ազգի մէջ թատերագրութեան այն
տեսակները, որոնցից վնասներ են առաջ գա-
լիս: Նա յոյս ունի, որ հայոց ազգը ազատ կը
մնայ այդ չարիքից, որ աշխարհական թատ-
րոնը երբեք չի ապականի հայոց բարեքը: Ու
միանգամայն բարեմիտ, հոգու եւ կրօնի տեսա-
կէտից բոլորովին օգտակար մի թատերագրու-
թեան օրինակ է տալիս, հրատարակելով իր
«Պոքոլով Մեծն»:

Կարեւոր է կայ երկար խօսելու այդ ողբեր-
գութեան մասին: Բաւական է ասել, որ դա
մեր պատմական բազմաթիւ պիեսների նախա-
հայրն է: Վերցրել կարդացե՛ք ինչ պատմական
պիես ձեռք է ընկնում—«Սամել», «Արշակ Բ.»,
«Թուգան» եւ դրանց մէջ կը գտնէք այն բո-
լորը, ինչ Հ. Մինասեան գրել է իր «Պոքոլով-
մէ»:

Նշանաւոր է այդ սկզբնաւորութիւնը. այդ-
տեղից են ծնվում եւ բազմաթիւ մեր պատ-
մական պիեսները: Միսիթարեանների մօտ էր
ուսում առնում թիւրքահայ երիտասարդու-
թիւնը: Մուրադեան վարժարանում թատրո-
նական ներկայացումներ էին լինում: Եւ ահա
Միսիթարեանների աշակերտները Կ. Պոլսում
հայկական թատրոնի հիմքն են դնում յիսու-
նական թուականներին: Գործը համակրութիւն
է գտնում. դերասանական խմբեր են կազմ-
վում, առաջ է գալիս ինքնուրոյն թատերա-
գրութիւն: Ուսուցիչների խրատները սրբու-
թեամբ են պահվում. ամեն մի գրող հայոց
պատմութիւնից է ողբերգութեան նիւթը ընտ-
րում: Սրապիտն Հէքիմեանը, Մկրտիչ Պէշիկ-
թալիանը բազմաթիւ հետեւողներ են ունե-
ցում: Նմանութիւնը ուսուցիչների եւ աշա-
կերտների մէջ այնքան մեծ է, որ Հէքիմեանը,
Հ. Մինասեանի նման, իր պատմական ողբեր-
գութիւնները գրում է զորաւր լիզուով. իսկ
Մարկոս Աղաբեգեանը իր «Գարեգին» ողբեր-

կիցներն էլ այդ անմահների կարգը կանցնէին,
չէ՞ որ դուք էլ բարեգործում էք՝ սեւը օսե-
տակ ցոյց տալով, չեղած արժանիքը դրուա-
տելով: Բայց առաջ լաւ ճանաչեցէ՛ք, ում էք
գովասանքներ շոյալում, նախ լաւ թափանցէ՛ք
այդ դիմակաւորված դարչնիների ապականված
ցեխոտ սրտերը եւ ապա առաջադէպ դուրս ե-
կե՛ք: Բաւական է, ինչ որ ձեր կոկորդիլոսի
կեղծ արցունքներով մոլորեցրիք ընթերցողնե-
րին եւ անպատեհեցիք իսկական բարեգործու-
թիւնը:

Գէորգ Զահ. Մկրտումեան

Ստորագրան

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

«Մ» խմբի թղթակաւ Կ. Արծրունի, 38 երես,
գ. 5 կ. Թիֆլիս, 1901 թ.

Բժշկապետ Վ. Արծրունին, իր օգտուէտ
բժշկական ժողովրդական աշխատութիւններով,
իր տոկոսն ու արդիւնաւէտ գործունէութեամբ,
համակրութիւն է վատակել ժողովրդի կողմից,
որը եւ անհամբեր ոպասում է նրա գրքոյկնե-
րի լոյս տեսնելուն եւ չէ սխալվում:

Այդ գրքոյկները կազմված են բարեխղճու-
թեամբ, լիզուն ժողովրդական է, հասկանալի,
նիւթերը հետաքրքրական են եւ նրանց մէջ
կենսական հարցեր են շօյալվում:

Բժշկապետի լոյս ընծայած գրքոյկներին մէջ
կան նոյնպէս ինտելիգենտների համար գրքեր,
բայց դժբաղդաբար այդ վերջինները չեն հե-
տաքրքրվում այդ գրքերով եւ առ հասարակ
հայերէն հրատարակութիւններով: Արդեօք չա՞տ
կը գտնվեն հայ ինտելիգենտ ընտանիքներ, ուր
մուտք ունենային, գոնէ այս վերջին հինգ,
տասը տարվան ընթացքում հրատարակված
հայերէն գրքերը:

Բժշկապետի գրքերը ամեն տան մէջ պիտի
լինեն: Նրա վերջին գրքոյկը «Մի խմբ»-ը
պարտաւոր է կարդալ իւրաքանչիւր մայր, իւ-
րաքանչիւր հայր:

Իրաւացի է հեղինակի ասածը, թէ Մովսէսը,
եթէ մեր ժամանակներում ապրէր, մարդ-
գութեան առաջադրանքում ասում է. «Բոլորովին
զանց արի նրա մէջ թագուն բանասիրութիւն-
ներ եւ սիրահարութիւններ խառնել, ինչպէս
սովորական է եւրօպական թատերց մէջ, մի-
միայն հայրենեաց եւ եկեղեցւոյ սիրոյ անհա-
րին յուզմունք տալ կամեցայ իմ զիջազանցս
իրանց այլ եւ այլ մարմնաւոր եւ երկրաւոր
սիրոյ կրկն իրանց յաղթել տալով: Սա հօ
Միսիթարեան հայրերի իսկական բեցեպան է:

Այդ բեցեպանով էին թիվում մեր պատմա-
կան պիեսները: Եւ ո՞վ ասես, որ չը փորձէր իր
ոյժերը այդ առաջադրանքում: Մի կատարեալ հա-
մաճարակի կերպարանք էր ընդունել ողբեր-
գութիւններ գրելու մոլովութիւնը եւ չափազան-
ցութեան մէջ ընկած չենք լինի, եթէ ասենք,
որ հայոց պատմութեան մէջ, այն էլ սկսած
քրիստոնէութիւնը ընդունելու չըլանից, չը
կայ փոքր ի շատեւ ուշադրութեան արժանի
մի անուն, որ պատմական ողբերգութեան
նիւթ չը լինի դարձած: Այնպիսի անուն կամ
անաշուղտութեան մասին շատ էլ մտածել չը
հարկաւոր: Բաւական էր իմանալ մի քանի
բան պատմութիւնից—եւ ամեն ինչ պատրաստ
է. երկար ու անհամ մենախօսութիւններ,
հեռան ֆրագներ, ազգասիրութիւն եւ եկեղե-
ցասիրութիւն—սրանք այնպիսի բաներ չեն, որ
դժուարութեամբ ձեռք բերվին պիեսների զար-
գարելու համար: Խիստ պահանջներ չը կային.
հանդիսատեսը զգացվում էր, արտասովում եւ
դրանից աւել բան թատրոնից չը էլ պահանջ-
վում: Ոչինչ վնաս չը կար, եթէ զանազան
մարդկանց գրած, զանազան անունների կրող,
պատմական զանազան ժամանակներից վերց-
րած ողբերգութիւնները ունէին մի ընդհանուր
ձեւ ու կաղապար, որ նրանք մի բերանի մէջ
էին ծամած ու ծամծամ: Տիպ, բնաւորու-
թիւն, ժամանակի լուսաբանութիւն չը կար եւ
չէր պահանջվում: Հայոց այդ ողբերգութիւնների
մէջ երկու կերպարանք կարող էր ունենալ—
կամ «քաջաբան», այսինքն օղբ հայրենասիրա-

Ե: Եւ մեր ազգայնէրները դեռ համար զիջում թուք ու մուր, հայոյանքներ թափեցին խեղճ Պատկանեանի վրա: Միթէ ուրիշ ազգերի մէջը կան սնանկաղած վաճառականներ, կատար

դարոցի հոգաբարձութիւնը չէ հաշտվում այդ
նոր հիմնարկութեան հետ եւ բեմը տեղափոխ-
վում է Շերմազանեանի տունը՝ Թատրոնական

դարոցի հոգաբարձութիւնը չէ հաշտվում այդ
նոր հիմնարկութեան հետ եւ բեմը տեղափոխ-
վում է Շերմազանեանի տունը՝ Թատրոնական

Ահա արեւելեան հայերի ամենամեծ ծառա

*) ձիշտ է, 1860-ին երևաց պ. Պռոշեանի «Սօս վարդիի եր» վէպը. բայց դա ամէլ աղքատութեան վերաբերեալ, քան զդարձուստին: Եւ, վերջապէս պ. Պռոշեանն էլ այդ վէպից լետու երկար լռեց:

Ե: Եւ մեր ազգայնէրները դեռ համար զիջած թուք ու մուր, հայոյանքներ թափեցին խեղճ Պատկանեանի վրա: Միթէ ուրիշ ազգերի մէջը կան սնանկաղած վաճառականներ, կատար

*) ձիշտ է, 1860-ին երևաց պ. Պռոշեանի «Սօս վարդիի եր» վէպը. բայց դա ամէլ աղքատութեան վերաբերեալ, քան զդարձուստին: Եւ, վերջապէս պ. Պռոշեանն էլ այդ վէպից լետու երկար լռեց:

մաճայնութիւնները մասին բարձրագոյն մասնա-
ժողովին:

ՀԱՍԳԱ. Ռուսաց կառավարութիւնը զիմեց
յիշատակագրով միջնորդ դատարանի անդամ
Հաապայում, պետական խորհրդի անդամ Աս-
սերին Ռուսաստանի եւ Միացեալ-Նահանգնե-
րի միջեւ ծագած վեճը, Բերլինցեան ծոցում
«կոտիկ»-ներ որսալու վերաբերմամբ, միջնորդ
դատարանով քննելու առիթով:

ԵՕԿՕՀԱՄԱ. Երեք հազար ապստամբ-յինա-
ցիներ, լուրերին նայելով, ներս խուժեցին
Կորէյա Տուսէն գետով Կորէյայի Իւսիս-ա-
րեւելեան սահմանի վրա: Իրանց հրաւած չըր-
ջանում նրանք մեծ յուզմունք առաջացրին:

ՊԵԿԻՆ. Վարդերգէ էրաւունք տուեց մի
քանի չինական զօրաբաժիններին ոստիկանա-
կան ծառայութիւն կատարել Պէկինի չըջակա-
ներում աւազակութիւնը ճնշելու համար:

ՍՏՕԿՂՈՄ. Թագաւորն ընդունեց ծովային
մինիստր Դիրաէնի հրաժարականը:

ԼՕՆԴՕՆ. Կիտլենէր գեկուցանում է, որ
հոմաների 18 բառայիծներ նաւերն են նըս-
տեցրած Անգլիա վերադառնալու համար:

Ինչպէս հաղորդում է Ռէյտէրի գործակա-
նութիւնը Կլէրկոզորպից, վճռված է Գարտե-
րէսֆօնտնէ քարտէքանդ անել: Շտէյն եւ Դէ-
վէտ իւր թէ գտնվում են արեւմտեան Տրանս-
վալիում:

ՄԱԴԻԴԻ. Բարցելոնայում մի փոքր հանգս-
տութիւն սկսվեց. այնուամենայնիւ գրութիւ-
նը մնում է լուրջ. կալանաւորումները շարու-
նակվում են: Պաշտօնական հետազոտը հաւատ-
տում է, որ փողոցներում այժմ հանգստու-
թիւնը խանգարում են զլխաւորապէս կանայք
եւ երեխաները: Ձիաքաչ երկաթուղու երթե-
ւելութիւնը անհնարին է դարձել: Ամենազը-
խաւոր գործարարներում աշխատանքները
վերակալվեցին:

Բիլլաուից, հաղորդում են, որ այդ չըջանում
գործող անիշխանականները անհետացել են:
Հանգստութիւնը ամին տեղ վերականգնվում է:
Կ. ՊՕԼԻՍ. Վերջին վեց օրերի ընթացքում
ժամատարանով հիւանդանալու ոչ մէկ կապածե-
լի դէպք չը կար, այդ պատճառով գնացողների
համար կարանտինային միջոցները վերացված
են:

ԲԵԼԳԻԱ. Դաւանութիւնները մինիստր Մա-
րինկովիչ եւ զինուորական մինիստր Միլոշ Վա-
սիլ հրաժարական տուեցին: Թագաւորը դաւա-
նութիւնները մինիստր նշանակեց պրօֆէսոր եւ
նախկին մինիստր Լիւքսմիր Կովաչեւիչին, իսկ
զինուորական մինիստր նշանակեց ընդհանուր
շտաբի գնդապետ Բոժիզար Եանկովիչին: Մի-
նիստրների հրաժարականը բացատրվում է
երկուսի միջեւ ծագած անձնական վեճով:

28 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՐԳ. Հաւանաւորաբար յանձ-
նաժողովի կողմից Բօժիզար խորհուրդը նկա-
տի անելով եւ քննելով Վադիմիրովկայում, Տեկեբայ Տուրկում, Մերեկում եւ Կարակու-
զայում պատահած սուր վարակիչ հիւանդա-
ցումների գործին վերաբերեալ բոլոր տեղեկու-
թիւնները եւ նիւթերը, եկա այն եզրակացու-
թեան, որ այդ տեղերում անցեալ տարվայ
վերջում եւ այս տարվայ սկզբում նկատված
սուր վարակիչ հիւանդացումների դէպքերը
պէտք է ճանաչել իբր հնչեկական ժանտախտի
դէպքեր:

Գիւնեբայ Վոլովի հետազոտը Պորտ-Արտու-
րից ապրիլի 17-ից: «Գիւնեբայ Յերպիցիւն ամ-
բողջ զօրաբաժինը վերադարձաւ Մուկդէն, ժա-
մանակաւորապէս երեք տեսակ զինակիր զի-
նուորներից բերդապահ զօրք թողնելով Սինց-
զինտեհում: Կապը պահպանելու համար հաս-
տատված է չինական թոռուցիկ պոստ, իսկ ճա-
նապարհի կէսին, ինչպէս քաղաքում բանակ է
դրել մի առանձին զօրաբաժին. վերաւորներին
տեղափոխել են Մուկդէն. նրանցից փոխե-
ստուլ Լեպեռլիւն մեռաւ:

ՄՕՍԿՎԱ. Վանսօվիկայ այցելեց ուսանողա-
կան հանրակացարանը, պտտեց բոլոր սենեակ-
ները եւ խօսակցեց ուսանողներին հետ:

ՊԱՐԻԶ. Բարցելոնայից ստացված տեղեկու-
թիւններով, քաղաքի զանազան ռազմադիտա-
կան կէտերում գետնոված են բազմաթիւ զօր-
քեր: Նահանգապետը հրամայեց փակել բա-
նուորական ընկերութիւնները: Ձիաքաչի ծա-
ռայողների գործադուրը շարունակվում է: Բազ-
մաթիւ ձերբակալութիւններ են արվել: Վեր-
ջին խառնակութիւնների ծրագիրը վերադրվում
է գլխաւորապէս անիշխանականներին:

ԿԼԵՐԿՍԳՐՈՐՊ. Մէտուէն հաղորդում է, որ
ինքը Հաուսֆօնտնէի մօտ բօքսիտից յետ է
խլել այն թիւղանօթը, որ նրանք գրաւել էին

Յիւլիակասկէի մօտ: Չորս բօքս սպանվել են,
եօթը՝ գերի ընկել: Բաքինգտոն հողի տակից
հանեց մի թիւղանօթ եւ ինքը ուռւմ:

ՍԻՄԼԱ. Կարգադրութիւն է արված, որ
Հօնգկոնցից իսկոյն Հնդկաստան վերադառնալ
հեծելազօր մի գունդ պաշարողական գործիք-
ներով ու ռազմաթիւքով, Վէյնայվէյց—մի
հետեւակ գունդ եւ Տեանձինց—նոյնպէս մի
հետեւակ գունդ: Մնացած զօրքերի վերադար-
ձը կը կատարվի աստիճանաբար:

ՇԱՆԳՀԱՅ. Այստեղի վրայով Պեկին գնալով
տեղա ժամանեց Պիլօնի տեղ ֆրանսիական
գեւազան նշանակված Բօ—Ինչպէս հաւատար
աղբիւրից մասնաւոր հետազոտներով հաղոր-
դում են, Սիանֆույում սկսում է բացարձակու-
րէն եւ յոխորտաբար վարվել յետադիմական
կուսակցութիւնը, որի պարագլուխն է ներքե-
նի Լիլիէն—Ին եւ որին պաշտպանում են Լուս-
նային եւ Իւնլու: Ահ է ծագել, որ կարող է
տեղի ունենալ պալատական յեղափոխութիւն:
Միտք կայ կայսրին ոչ միայն գահից զրկել,
այլ եւ հետացնել (?) յօգուտ օրինաւոր գահա-
ժառանգի:

ՊԵԿԻՆ. Ամերիկական զօրքերը այսօր մաք-
րեցին իրանց վերահսկողութեան տակ գտնված
թաղերը, բացի նուիրական քաղաքամասից, որ
չը նայելով միւս օտարազգիների բողոքներին,
այսուհետեւ էլ գրաւված կը մնայ, եթէ հակա-
ռակ իմաստով կարգադրութիւններ չը լինեն
Վաշինգտոնից: Որպէս զի ամերիկական զօրքե-
րի հեռանալուց յետոյ քառս չառաջանար, Չաֆ-
ֆի անցեալ չարաթ տեղեկացրեց Վաշինգթէին,
որ ամերիկական զօրքերը այսօր հեռանալու
էին յիշեալ թաղերից: Ամերիկացիների գրաւած
թաղերից նրանք, որոնք անպիպացիների գրա-
ւածներին սահմանակից էին, յանձնված են
անգլիացիներին, իսկ մնացածները ենթարկվե-
լու են գերմանացիների վերահսկողութեան:

ՎԻԵՆԱ. «Fremden Blatt», խօսելով յունա-
կան եւ ռումինական թագաւորների Աքա-
ցիայում ունենալիք առաջիկայ տեսակցութեան
մասին, շատ հիմնաւոր է գտնում յունական եւ
ռումինական մամուլի տուած մեկնութիւնը,
թէ այդ տեսակցութիւնը միմիայն ամրապնդե-
լու է այդ երկու տէրութիւնների մէջ գոյու-
թիւն ունեցող բարեկամական յարաբերու-
թիւնները: Այդ երկու արքունիքների մէջ
եղած բարեկամական յարաբերութիւնների
չորհիւ, ասում է լրագիրը, այդ տեսակցու-
թիւնը այնքան բնական է, որ հարկ չը կայ
որ եւ գաղաւթի նպատակներ եւ բալկանեան
տէրութիւնների ուրիշ խմբի վերաբերմամբ
թշնամական դիտաւորութիւններ վերադրել
նրան, ինչպէս ասում է բալկանեան մամուլը
մի մասը: Աւստրո-Հունգարիայի տեսակէտից
այդ տեսակցութիւնը, ինչպէս առհասարակ
ամեն մի դէպք, որ ընդունակ է ամրապնդել
Բալկանեան տէրութիւնների մէջ եղած փոխա-
դարձ բարեկամական յարաբերութիւնները,
կարող է միմիայն ողջունվել անկեղծ համա-
կրութեամբ:

ԲԵՐԼԻՆ. Ռուսերով «Новое Время»-ի յայտ-
նած այն կարծիքը մասին, թէ Ձինաստան
ուղարկվող թիւրքական միսսիան գերմանա-
կան քաղաքականութեան մի նոր յաղթանակ
է Բօսֆօրի ամբողջում, «Berliner Neuste
Nachrichten» ասում է. «Այդ միսսիայի համար
բաւարար բացատրութիւն կարող է ծառայել
խալիֆայութեան եւ չինայի իսլամեղականների
միջեւ այժմ ունեցած յարաբերութիւնները,
որոնք երբեք չեն ընդհատվել: Միսսիայի հա-
մար իբր առանձնակի առիթ էր բերված մահ-
մեղականների ապստամբութիւնը Կանսույում,
բայց այդ առիթը չբացաւ այն ժամանակ, երբ
պարզվեց, որ ապստամբութիւնը աննշան էր,
ուստի եւ անհաւանական դարձաւ միսսիայի
Ձինաստան գնալը խաղաղութեան բանակցու-
թիւններին, գործի համար օգտուէտ կերպով,
մասնակցելու համար: Դրութեան բարուրդով-
լու չնորհիւ միսսիայի գալուստը չափազանց
ոչ չէ պէտք է համարվել: Այդպիսի հանգս-
տեւններում Գերմանիան ոչ մի չափ չէ կա-
րող ունենալ միսսիայից: Գերմանական դիւա-
նագրութեան այս հայեացքը պէտք է
լաւ յայտնի լինի Բարձրագոյն Դռան: Այդ միս-
սիան որ եւ է գերմանական ծրագիրների հետ
կապելու փորձը հետեւաբար ծագում է առել
սխալ ենթադրութիւններից:

Կ. ՊՕԼԻՍ. Դեսպանները վերադարձին Բարձ-
րագոյն Դռանը վերջին յայտադրեր, իբրեւ վի-
րաւորական օտարազգի պոստերի համար, ո-
րովհետեւ այդ յայտադրում այդ պոստերը մե-
ղադրվում են մաքսանկալութեամբ պարագե-
լու մէջ: Դեսպանները հրաժարվում են այլ եւս

գրագրութիւն վարել Բարձրագոյն Դռան հետ
այդ հարցի վերաբերմամբ եւ բաւարարութիւն
են պահանջում օտարազգի պոստերի համար:
ՎԻՍՍԱՒԷՆ. Պրոսական իշխանուհի Լուիզա
վախճանվեց սրտի պայթիւնից:

ՊԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀՐԱՄԱՐԱԿԻՆԵՐ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Արանով յայտարարում է, որ նրա գիւնատան
մէջ 1901 թւի մայիսի 1-ին նշանակված է
աճուրդ՝ կապալով տալու Տէր-Ղուկասովի փո-
ղոցը ամբողջովին քարայտակելու աշխա-
տանքները, 246 պաղ. սաժէն երկարութեամբ
եւ 1868 բուրլի գումարով: Աճուրդին մասնակ-
ցել ցանկացողները կարող են տեսնել պայմա-
նագիրը վարչութեան չինարարական բաժան
մուշեղում բոլոր լի օրերը ժամի 9-ից մինչեւ
3-ը:

Ներկայ տարվայ մայիսի 16-ին, Ներսիսեան
հայոց հոգեւոր դպրոցի հոգաբարձութեան խոր-
հրդարանում լինելու է

ՀՐԱՊԱՐԱՆԿԱԿԱՆ ԱՃՈՒՐԴ

վաճառելու դպրոցապատկան երկարակնի տու-
նը, որ կապակ է հանդուցեալ Գուլիփաշեանց,
Ալզ ասն գետին տարածութիւնը 26 քառա-
կուսի սաժէն է եւ գտնվում է Ե-րդ քաղաքա-
մասում, Ուզօնի փողոցի վրա: Տուըն գնա-
հատված է 2000 բուրլի եւ աճուրդ սկսվելու
է այդ գնից: (29 ա. 10 մ.) 1—2

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
Դ Ի Ր Ե Կ Տ Օ Ր Ը

յայտնում է, որ առաջիկայ 1901—1902 ուսում-
նական տարվայ համար չեն լինի աշակերտ-
ների ընդունելութիւններ ԱԽԱԳ ՆԱ-
ԽԱՊԱՐԱՆԱՍԿԱՆ, ԵՒ ԱՌԱՋԻՆ ՈՒ ԵՐԿ-
ՐՈՐԻ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ տեղ չը լինելու
պատճառով:
(ապ. 22, 25, 26, 29, մայիսի 6 եւ 13)

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Արանով հայտնում է ի տեղեկութիւն ընդհանուրի, սր, մինիստրների կօմիտէի 1899 թւա-
կանի յունվարի 28-ին Բարձրագոյն հաստատված կանոնադրութեան համաձայն, Թիֆլիսի քա-
ղաքային խորհուրդը արձակում է Թիֆլիս քաղաքի երրորդ փոխառութեան օբիգացիաներ
800,000 բուրլի գումարի, 100 եւ 1000 բուրլիանոց թղթերով, որոնք կը բերեն 50/0: Տոկոս-
ները կը վճարվեն լիովին, բայց այն տուրքից, որ անվում է դրամագրուկներից ստացվող
եկամուտներից: Արժէթղթերը կը լինեն անուանական կամ անանուն: Արժէթղթերի տիրաժը
կը կատարվի իսկական գումով յենթացա 25 տարիների, սկսած 1901 թւականի օգոստոսի 1-ից՝
կը կատարվի Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ եւ այն տեղեկութեան, որոնց վրա մասնաւոր
համար—տիրաժից յետոյ երեք ամիս անցած: Արժէթղթերի եւ կտրօնների հատուցումն կը
կատարվի Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ եւ այն տեղեկութեան, որոնց վրա մասնաւոր
կը լինի վարչութիւնը առանձին յայտարարութիւններով:
Թիֆլիս արժէթղթերի մի մասն վաճառուին 200,000 գումարի կը կատարվի հրապարակական
ստորագրութեամբ հետեւեալ պայմաններով.—1) Արժէթղթերի ստորագրութիւնը կընդունվի Թիֆ-
լիսի քաղաքային վարչութեան, Թիֆլիսի տուրքերի, մայիսի 3-ից մինչեւ 8-ը, հաշվելով դրա մէջ
թեան մէջ, առաւօտվայ պարագմունքի ժամանակ: Արժէթղթերի տիրաժը կը վճարվի 15-ը, եւ այդ ժամանակ
100 բուրլու իսկական արժէքի փոխանակ: 3) Ի հաշիւ ստորագրութեան գին՝ ստորագրութեան
ժամանակ հատուցվում է ստորագրվողի պահանջած գումարի 100/0-ը, իբրեւ գրաւական:
4) Եթէ ստորագրութեան ժամանակ պահանջներ կը յայտնվեն 200,000 բուրլուց աւելի գու-
մարի, այդ դէպքում այն անձինք, որոնք ստորագրվել են 2000 բուրլուց ոչ աւելի գումարի,
բաւարարութիւն կը տաան լիովին, իսկ 2000 բուրլուց աւելի գումարի պահանջ յայտնողնե-
րին գոհացումն կը արվի համեմատական բաժանան չափով, բայց ոչ պակաս քան 2000 բուրլի
գումարի: 5) Մնացած 90/0-ը, որ պէտք է ստացվի ստորագրվողից գումարի համեմատական
գումարով: 6) Այն դէպքում, երբ ստորագրվողը լիովին
չի հատուցանի նրանից ստացվելիք գումարը մինչեւ 1901 թւականի մայիսի 15-ը, նա կորց-
նում է իր իրաւունքը ստորագրվու ժամանակ իբր գրաւական հատուցած գումարի վրա, որ
եւ համարվում է քաղաքի սեփականութիւն: 7) Տուած արժէթղթերը կը սկսեն տոկոս բերել
1901 թւականի մայիսի 1-ից: 1—3

ՆԱՐԱՐԱՐԻՈՆԱՐԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒՄԵԱՆ ՎԱՐՉՈՒՄԸ

յայտնում է ի գիտութիւն պ.պ. բաժնետէրերի, որ կերակի օր, այս ապրիլի 29-ին, առաւօտեան
10 ժամին քաղաքային տան դահլիճում նշանակված է

Ա Ր Տ Ա Կ Ա Ր Գ Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Վ

Ձրադմունքի առարկաներն են:
1) 1901 թւի նախահաշուի ծախքերի հաստատումը,
2) վարչութեան հրահանգի հաստատումը,
3) Փայերի հարցը:
(ապ. 19, 25 եւ 29) 3—3

!!! ՎԵՐՋԻՆ ՀՐԱՄԱՐ !!!

Ս. Մ. ԱՆՆԵՍՈՎԻ ՄՕՍԿՎԱՅԻ ԳԻԼՋՆԵՐ

Ենվում են ֆրանսիական ամենալաւ զը Դէրնէր Կարտուշ թղթից
Ս. Մ. Աննանովի Մօսկվայի գիւղաները բարակ են, գեղեցիկ, մոխր չին թղ-
նում եւ ոչնչացնում են նիկոտինի ներգործութիւնը:

Պահանջեցէք ամեն տեղ Ս. Մ. Աննանովի Մօսկվայի գիւղաները
Գործարանը—ՄՕՍԿՎԱՅԻՄ, բաժանմունքը—ՐՕՍՏՕՎՈՒՄ ԴՕՆԻ ՎՐԱ:
9—10